

անտի, այս մասն նոցա կայցէ, որ շուտադոյնք և իմաստնագոյնք իցեն ։

Ուղղ. Զայս ցուցաք լիով (խորով?) որպէս և ասացի... որ ուշմանադոյնք իցեն ։

ԾԶ.

Էջ 218. տող 9. « Արդ ոլիմպիաթն առ յունօք անուանի այն, որ ըստ չորս չորս ամացն ժողովին ի տօն տարեկանացն, վասն ըստ չորից ամաց արեգականն ընթացից, որ ըստ ամի երեք ժամք ժողովին և լինին օր մի » ։

Ուղղ. Որ ըստ ամի ամի վեց ժամք ժողովին և լինին օր մի։ Այս կտորն ևս ցուցանէ թէ մեր թարգմանութիւնը Միլիոնի բնագրէն կը տարբերի՝ այլ ձեռագրէ եղած ։

ԾԵ.

Էջ 293. տող 3. « Վկային մեծի յաբութեանն. Պետրոս և Թովմաս և Յովհաննէս, և այլ ամենայն առաքեալք... կանայք՝ որ կայան զոտս նորա... զի նուորքն, արծաթն որ տուաւ, տեղին ինքն ուր կոյսն էր, տունս սուրբ եկեղեցոյս » ևն ։

Ուղղ. Տեղին ինքն ուր կոյսն տունս սուրբ եկեղեցոյս։ Մատթէոս Աւետ. « Եկայք տեսէք զտեղին ուր կայր » ։ Ս. Հայրը ի միջի այլոց վկայութեանց կ'ըսէ նաև այս տեղը, ուր եղաւ գերեզման Քրիստոսի, շինուեցաւ սուրբ եկեղեցիս, իբր վկայ յարութեան Տեառն։ Իսկ յոյնը երեկի կամ փառաւոր ։

ԾԸ.

Էջ 294. տող 3. « Արդ ի բեթղհէնց յերկնից իջանէր, և ի լեռնէն ձիթենեաց յերկինս վերանայր » ։

Ուղղ. Արդ աւելորդ. ի բեթղհէնց յերկնից իջանէր, ի լեռնէն ձիթենեաց յերկինս վերանայր ։

(Շարումակիլի)

Հ. ԳԱՐԸ. ՆԱԶԱԳՅՏԱՆ

ՀԱՅԵՐԷՆ ՆՈՐ ԲԱՌԵՐ

ՄԱՇՏՈՑԻ ՄԷՋ

(Շար. տես 1921 թվ. էջ 344)

Խաչանեցիտ « Խաչալուայ, ջուր օրհնելը » ։ Կանոն խաչալուայ առնելոյ որ կոչի խաչահանգիստ. Մաշտ. 301 ։

Խաչվառ « Խաչանիշ զրօշ. եկեղեցական զարդ մը » ։ Գնան քահանայք ի տուն մեռելոյն ջուրջառաւ, խաչիւ, խաչվառաւ, բուրվառաւ և մոմեղինօր. Մաշտ. 441 ։

Խարտափրակ « Կրօնաւոր ձեռնարկուող անձին օժանդակը » ։ Եւ սարկաւազն կամ խարտափրակն անէ զնուիրեալն առ եպիսկոպոսն. Մ. մաշտ. 237. տնս նաև 240 ր. 242 ա. ևն. — Բառս առանձնապէս կը յիշէ Զախշ. իսկ Նէֆ թէև առանձին չունի, բայց կը զնէ քրդապահ բառին տակ, իբրև փոխառութիւն յն. χαρτοφύλακ « գրականագետ, թղթապահ » բառէն ։

Մարկիտեսիլ « ծաղկի նման տեսքով » ։ Զուարթասաղարթ, ծաղկեայտեսիլ (!) և հսկայածե անձամբքս. Մ. մաշտ. 24 ա ։ Կատարելապէս « կատարեալ կազմով, ոչ պակասաւոր » ։ Զմի մարմին կատարելապէս՝ զմարդոյ կամ զանանոյ՝ ոչ ոք կարէ յերկուս հատանել. Մ. մաշտ. 231 ր ։

Կիսատարկատուութիւն « սարկաւազութեան երկրորդական աստիճանը » ։ Հին գերորդ կարգ աստիճանի կիսասարկաւազութեան. Մ. մաշտ. 240 ր ։

Հալաօրհնէք « պակի նախնական կարգը, այն է նորապսակներուն զգեստները օրհնել » ։ Մաշտ. 121-4 (տպուած է սըխալմամբ իբր երկու բառ) ։


Համեստաբարոյ « համեստ բարքով, պարկեշտ » ։ Պարզեւս սոցա, Տէր, զառողջ կեանս, զառաքելին վարս և զհամեստաբարոյ երջանկութիւնս. Մաշտ. 705 ։ Հատրհնէք « եկեղեցոյն ընծայարեւրուած թռչունները օրհնելու կարգը » ։ Կանոն Հաւօրհնէքի. Մ. մաշտ. 89 ր. (սըխալմամբ տպուած է իբրև երկու բառ) ։

Հերետիկոսպետ « հերձուածողներուն »

2011-55

digitised by

A.R.A.R.®



գլուխն ու պաշտպանը»։ Եւ մեք աղօթիւք ինդրեմք յաստուծոյ՝ ընկճել զհերետիկոսացական սատանայ։ Մ. մաշտ. 169 բ։

Հոգևորեցուցանել «հոգևոր կամ կրօնական արժէք տալ, սրբազործել»։ Առ ի սրբել և հոգևորեցուցանել զմարմնաւոր գործն ճարտարապետին փորուածոցն. Մ. մաշտ. 157 բ։

Ձայնալոյս «ձայնը լսուած, լսուելու արժանի եղած»։ Զնոյեանն նաւահանգիստ դադարման ալիաց՝ ոգեվէրն խաղաղացեալ վրդովմանց, խորհրդակիր և ձայնալուր, արժանաւորեալ արթնացեալ սրբութեամբ։ Մ. մաշտ. 274 բ։

Ղեկաբափ «ղեկը ինկած՝ կորսուած»։ Եղաք նաւաբեկ ու ղեկաթափ և խոնարհեցաւ կայմն նաւավարին։ Մ. մաշտ. 1714, էջ 386։

Ճկոյրաւոյր «մատնեմատ (որ ճկոյթին քոփն է և անոր մայրը կը համարուի)»։ Եւ ապա զմատնինն զնէ ի չորրորդ մատնին (ճկոթամայր) աջոյ ձեռնին հարսմն։ Մաշտ. 119։

Ճշգրտագի «ճիշդ նման և զգեցելի նրկարուած»։ Ոյմն ծաղկող և պատկերահան, ճշգրտագի ի տիպ զանազան։ Մ. մաշտ. 278 բ (զանձ)։

Մահալապ «մահը կապած»։ Զմահ նոցա դժնեայ մահակապ առեալ թանդ, կապ առեալ դադարեցուցանէ ի կէտ։ Մ. մաշտ. 1714, էջ 441. հմտ. Եղիշ. չրջր. 247. «Ի բազում տեղիս բազում անգամ զմահ կապէր»։

Մասնատուփ «Հաղորդութիւնը պահելու աման, որ քահանան ծանր հիւանդին քով տանելով՝ անոր մէջէն հաղորդութիւն կու տայ»։ այս իմաստով կը գործածուի բառս հիմայ, բայց «մեռոնի աման» մտքով է Մ. մաշտ. 174 բ. Եւ զկնի մեռոնակրին երթիցէ եպիսկոպոսն, ունելով ի ձեռնին զմանաստուփն՝ լի մեռոնաւ սրբով։ Հմտ. յաջորդը։

Մխռոնատուփ «մեռոն պահելու փոքր տուփ»։ Ապա շնու քահանայն զսուրբ իւղն ի միւռոնատուփն և ասէ շարական։ Մաշտ. 65։

Մորմորայից «կսկծանքով լի»։ Զտարակուսանս մեղաւորացն որ ի կայանս հոգւոցն և զմորմորայից փոշեմանութիւն նոցա։ Մ. մաշտ. 339 ա։

Նշմորենէք «նշանադրութեան կարգը»։ Մաշտ. 106-120։

Նոյնազարդ «նոյնպիսի զարդերով զարդարուած»։ Եւ որ զարդարեաց զէակս ամենայն պէսպէս գեղապանծութեամբ, նոյնազարդ պայծառութեամբ հրաշազարդեացէ զքեզ։ Մ. մաշտ. 254 բ։

Նորատիպ «նոր տպագրուած»։ Ընկալ և այժմ զնորատիպ գիրս զայս ի ձեռաց մերոց։ Մաշտ. 384. (նորակերտ բառ՝ որ էջմիածնի հրատարակիչները մտցուցած են Մաշտոցին մէջ)։

Շորեղէն «լաթէ շինուած»։ Զի և այս նիւթս շորեղէն արժանի լիցի սպասու եկեղեցւոյ քում սրբոյ։ Մ. մաշտ. 216 բ։ Ոգեվէր «հոգին վիրաւորող»։ վկայութիւնը տնի Ձայնալոյս։

Ողորմարուն «բնապէս ողորմած» (!) Աղիք և սիրտը ձեր զազանացեալ և քաբացեալ՝ եղիցին որպէս զզառանցն հեզոց և որպէս զողորմարուն արդարոցն՝ հեզացեալ և կակղացեալ։ Մ. մաշտ. 226 բ։

Պայծառաշուք «փառաւոր, պայծառ և շքեղ»։ Զգեստաւորեն զեպիսկոպոսն պայծառաշուք զգեստուքն։ Մ. մաշտ. 244 ա։

Պայծառափայլի «պայծառութեամբ փայլի»։ Պայծառափայլեցաւ շնորհս այս առ մեծ մարգարէն Մովսէս։ Մ. մաշտ. 335 բ։

Սաղարթակար «տերևներով կարուած»։ Երկուսեան ճաշակելով մերկացան, պատեալ տերևախիտ սաղարթակար։ Մ. մաշտ. 1714, էջ 441։

Սաղարթակարկատ «տերևներով կարկուտած»։ Եւ սաղարթակարկատ տերևոյն հայթայթին ծածկեալ զմերկութիւն ամթալի։ Մ. մաշտ. 1714, էջ 621։

Սպիտակակերպ «սպիտակ տեսքով»։ Ի լուսափետուր սպիտակակերպ երամս աղանձեաց։ Մաշտ. 623 (Յճիս)։

Սփոռ «բանի մը տակ փռելու լաթ»։ վկայութիւնը տնի զոգնոց։

(Շարուծակելի)

Հ. ԱՃԱՌԵԱՆ